

ՆԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՈՒՊՈՍԿԵՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

ՆԱԿՈՒՐ ՄԻՍՈՆՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու, ԵԳՊԱ դոցենտ,
Պատմամշակութային ժառանգության պահպանման
գիտահետազոտական կենտրոն*

Նայկական լեռնաշխարհում ժայռադատկերային արվեստը լայն տարածում է ստանում նոր քարի դարում եւ հարատեւում մինչեւ Վանի թագավորության ժամանակաշրջանը՝ վերադարձնելով ղեկավարվելով ընդհուպ մինչեւ միջնադար: Կարծր քարերի բնականից հարթ մակերեսները հնագույն ստեղծագործողների համար ծառայում են որդես ինքնատիպ «կտավներ»: Նին քանդակագործները նախընտրում էին քարակարկառների սեղանաձև, կարծես կողադաստ՝ արեայրուքով ծածկված քարերի հարթ մակերեսները: Ըստ մեր դիտարկումների՝ ընտրվել են այն քարակարկառները, որոնց ներքո հոսում են գետակներ եւ տեղ-տեղ բխում աղբյուրներ (օրինակ՝ Ջերմուկ, Սառցե լեռ, Զառ, Պաղաղբյուր եւ այլն): Այս վայրերում ժայռադատկերների «դորոցների» հարյուրամյա գործունեության համար կարեւոր նշանակություն են ունեցել ոչ միայն ամառային արոտավայրերը եւ անասնադահույան համար նույնատիպ միջավայրը, այլեւ որդես հրաշք ընկալվող եւ տարբեր ժողովուրդների հնագույն հավատալիքներում վկայված՝ քարից բխող կենսատու ջրերի մասին դատկերացումները, սրբազան լանդշաֆտի ընկալումը:

Ժայռադատկերները հնագույն դատմության եւ մշակույթի ինքնատիպ սկզբնաղբյուրներ են, որոնք խիտ ցանցով ծածկում են Նայաստանի լեռնային, նախալեռնային եւ նույնիսկ հովտային շրջանները՝ զբաղեցնելով ծովի մակերեսից 1000-3000 մ բարձրությամբ գոտիները: Ըստ նախնական տվյալների՝ Նայկական լեռնաշխարհում փաստվել է ավելի քան հարյուր հազար ժայռադատկեր, որոնք աչքի են ընկնում իրենց հարուստ բովանդակությամբ եւ կատարողական ոճերի բազմազանությամբ¹: Ննագույն ժամանակներից մեզ հասած այդ նկար-կերտվածքներում դրոշմված են բնության տարերային ուժերի դեմ դայքարի, մարդկանց եւ կենդանիների կենաց-մահու մաքառումների, նախադատմական մարդու երազանքների եւ աշխարհընկալումների առանցքային թե-

¹ Simonyan H., Tokhatyan K., "Petroglyphs of the Armenian Highland", *Archaeological Heritage of Armenia*, Yerevan, 2012, p. 13-15.

մաները, դրվագներ՝ նրա հանադատության կյանքից, կարեւոր ու տղավորիչ իրադարձություններ, դիտվածքներ:

Նման վիթխարի ժառանգությունը չէր կարող անտեսվել մեր դասնիչների կողմից: Մովսես Խորենացու «Նայոց դատմության» մեջ հիշատակվում է Նայկ նահապետի Պաքսամ թոռան որդի Տորք (Տուրք) Անգեղի գրույցը, որտեղ առաստելական այս հերոսը ոչ միայն հսկայական ատառած քարերով հեռու է վանել Սեւ ծովից մեր հայրենիքին սղառնացող աստատակիչների նավերը, այլև իր եղունգներով հղկել է որձաքարեր, դարձրել վիճագիր տախտակներ կամ դրանց վրա կերտել արժիվներ ու այլ դատկերներ²: Սա Նայկական լեռնաշխարհում լայնորեն տարածված ժայռադատկերների փորագրման հնագույն հիշատակություններից է: Ըստ ակադեմիկոս Արամ Ղանալանյանի՝ Նայկական լեռնաշխարհի նախաբնիկների՝ խեթերի, հայասացիների եւ այլ ցեղերի դիցարանում վկայված Տորք աստվածությունը, թերեւս, ծագում է խեթական Տարխու աստվածությունից³:

Տեղադրությունը

Ժայռադատկերները սովորաբար գտնվում են բարձր լեռներում: Սրանք ամենայն հավանականությամբ դաշտամունքային վայրեր են, հնագույն բացօթյա «տաճարներ»: Ինչդեռ նշեցինք, ժայռաքանդակները սփռված են Նայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր տարածաշրջաններում, սակայն առավել հոծ խմբավորումներով գտնվում են Գեղամա (Աժդահակ, Պայտասար, Չառ), Սյունիքի (Ուխտասար, Քարքարեր), Փոքր Կովկասի (Տաշիր՝ Պաղաղբյուր), Արցախի (Սեվաշ, Վայկունիք, Ծար), Ջերմուկի (Մուրաղեռ, Ալլիճ) եւ այլ լեռնաշղթաների, Արագած լեռան (Կաքավաձոր) բարձրադիր վայրերում, Վանա լճի ավազանում (Տիրսին սարահարթ): Ժայռադատկերներ կան նաեւ Նյուսիսային Նայաստանի նախալեռնային եւ հովտային շրջաններում՝ Արագածոտն գավառի Ոսկեհատ-Լեռնամերձ գյուղերի շրջակայքում: Այդ «կտավների» շնորհիվ մեզ են հասել հազարամյակներ առաջ աղյուսած մարդկանց դիցարանական, բարոյական, բնափիլիսոփայական եւ կրոնական դատկերացումները, աշխարհընկալումները: Դրանք նրանց շրջադատող կենդանական ու բուսական աշխարհի, կենցաղի, ծեսերի եւ երեսակայության առարկայական վավերագրեր

² Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ա. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1991, գիրք երկրորդ, գլուխ Ը, էջ 114-115:

³ Ղանալանյան Ա., «Քարի արվեստագործության արձագանքը հայ բանահյուսության մեջ», *Գիտություն եւ տեխնիկա*, N 9, 1978, էջ 26:

են, նաեւ դիցաբանական, ռազմի եւ որսի տեսարաններ վերարտադրող արվեստի առաջին գործեր:

Կրիչները

Ժայռադատներն են հանդիպում են սառցադաշտերի հղկած՝ մորենային գլաքարերի, հրաբխային «ռումբերի» եւ արտավիժումների՝ լավաների քարացած հոսքերի՝ բազալտե ժայռաբեկորների, քարանձավների տյատերի եւ քարա-ժայռերի հարթ մակերեսայիններին, հազվադեպ՝ նաեւ կարծր տուֆե ժայռերի մերկացումների վրա (Կաքավաձոր):

Տեխնիկան

Պատկերները կատարվել են քարե, հետագայում նաեւ մետաղե գործիքներով՝ ծեծման, փորագրման, փորագծման, մաշեցման (Լեռնամերձ)⁴, քանդակման, հազվադեպ՝ գունավորման տեխնիկայով:

Թեմատիկան

Երկրաչափական ու բուսական դատկերներ: Լայն տարածում ունեն երկնային լուսատուների (սոյյար նշաններ) դատկերները, որոնք հաճախ ուղեկցում են դիցաբանական հերոսներին եւ երկնային էակներին: Երկնային լուսատուների հետ կենդանիների եւ մարդկանց դատկերումը, մեր կարծիքով, խորհրդանշել է այդ էակների գերբնական, ոչ երկրային բնույթը (նկ. 1, 2): Նայաստանի հնագույն բնակիչների երեսակայության վրա բացառիկ տղավորություն են գործել երկնաքարերը, աստղերը, գիսաստղերը, զուցե եւ թռչող ափսեները: Ճակատագրական համարվող երկնային այս երեսույթների դարբերաբար կրկնության մասին են վկայում ինչդեպ խոր հնադարում, այնդեպ էլ միջնադարում սրանց նույնատիպ դատկերումը ժայռադատկերային արվեստում (Մուրադսար, նկ. 3) եւ եկեղեցիների (Պողոսավանք, Արթիկի եկեղեցի) որմերի վրա (նկ. 4, 5): Այս ժայռադատկերների եւ որմնադատկերների թվագրումը հիմք կարող է ծառայել երկնային բացառիկ տղավորիչ երեսույթների բացահայտման եւ թվագրման համար: Իսխատ ուշագրավ է, որ գիսաստղերը Նայաստանում միանման են ընկալվել եւ վերարտադրվել ինչդեպ հազարամյակների վաղեմություն ունեցող ժայռադատկերներում, այնդեպ էլ վաղ միջնադարում:

Երկրաչափական դատկերագրության մի ուշագրավ խումբ են կազմում ճանկախաչերը, որոնք խորհրդանշել են հավերժական շարժումը, աշխարհի շորս ծագերը, թերեւս նաեւ տիեզերաստեղծ շորս տարրերը՝ կրակը, ջուրը, հողը եւ

⁴ Դետագոտությունները՝ Բորիս Գասպարյանի:

քամին (նկ. 6): Այս դասակերպությունը լայնորեն տարածված է եղել նաև Ղա-
յաստանի բրոնզի դարի խեցեղենի զարդարվեստում, որի հնագույն օրինակը
դասակերված է Շենգավթի գունազարդ քրեղանի վրա (նկ. 7):

Ժայռադասակերներում հաճախ հանդիպում են կետը կամ շրջանը, որոնք
տղյար դասակերներ են: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ դրանք խորհրդանշում են ձուռ,
եւ կարող են ընկալվել որդես սերմ, իսկ հունարեն Ω «օմեգա» տառակերպ նշա-
նը՝ արգանդ, եւ այլն: Ըստ նրա մեկնաբանության՝ ժայռադասակերներում հան-
դիպող քառակուսին երկիրն է՝ իր չորս ծագերով, կամ չորս տարերքով՝ հող, ջուր,
հուր, օդ: Եռանկյունին խորհրդանշում է տիեզերական հուրը, թագ եւ այլն⁵:

Բազմաթիվ են մարդկանց, հեքիաթային էակների, հերոսների, նախնիներ-
րի, աստվածությունների, բարի եւ չար ոգիների կերպավորումները: Առավել տա-
րածված են կենդանիների, հրեշների, թռչունների ու սողունների՝ վիշապօձերի
ֆիգուրները, որոնք թերեւս մարմնավորել են տիեզերքի, բնության, տարերքի՝
փոթորիկ, ջրհեղեղ, երկրաշարժ, հրաբուխ եւ այլ ոգիների:

Կենցաղային եւ դաշտամունքային իրերի դասակերումն ավելի սահմանա-
փակ է: Դրանք զենքեր են, առօրյա գործածության իրեր, ցամաքային եւ ջրային
տրանսպորտի միջոցներ՝ անիվներ, սայլեր, մարտակառքեր, սահնակներ, լաս-
տեր, նավակներ: Ուշագրավ են ոռոգման համակարգերի քարտեզները, թակարդ-
ների, արգելադասունջների՝ քայթերի, խորհրդավոր կառույցների հասակագծերի
քանդակները: Տարածված են նաև գրի նախատիպեր՝ դասակերագրեր (ոլիկտո-
գրամներ), գաղափարագրեր հիշեցնող դասակերներ, ինչպես նաև ժամանակի ու
տարածության մեջ կողմնորոշվելու նշաններ, որոնք, ըստ Կարեն Թոլսաթյանի,
հանդիսացել են օրացույցներ եւ երկնային քարտեզներ:

Ոճը

Ոճական առումով ժայռադասակերները կարելի է բաժանել երկու մեծ խմ-
բի՝ նատուրալիստական եւ ոճավորված: Սրանք էլ իրենց հերթին բաժանվում
են դինամիկ (շարժուն) եւ ստատիկ (անշարժ) դասակերների: Ստատիկ ոճով
հիմնականում դասակերված են կենդանիները: Սրանք ներկայացված են նաև
վազքի եւ բարձունքից թռիչքի դահին՝ իրենց հետադարձորդ որսորդներից ազատ-
վելու տենչով: Մարդիկ նույնպես դասակերված են ինչպես ստատիկ, այնպես էլ
շարժման դահին: «Նախնադարյան այդ արվեստի գլուխգործոցը նետաձիգ-
ներն են որսի մեծ տեսարանում, որոնց փոքրիկ կերպարանքները լի են մի ձգ-
տումով, այն է՝ չվրիդել»:⁵ Նին Ղայաստանի այս «քարեմատյաններն» ունեն
տարբեր չափսեր, մոտիվների, կոմպոզիցիաների ու հորինվածքների բազմա-

⁵ Հարություն Մարտիրոսյան, «Մայր աստվածուհու ժայռանկարային դասակերները», *Գիտություն եւ տեխնիկա*, N 9, 1978, էջ 30-33:

ժանրություն, կատարման տեխնիկայի բազմազանություն, կերտարների տարաբնույթ հնչեղություն: Բաժանվում են՝ 1. առանձին կերտարներ (իրեր) եւ տեսարաններ, 2. թեմատիկ լուսանկարաբանականներ:

Մյուժներ

Առանձին կանգնած ֆիգուրներից եւ լուսանկարներից գառ, ժայռադասակերային արվեստին բնորոշ է նաեւ կոմպոզիցիոն լուսանկարագրությունը, իսկ որոշ դեղքերում՝ նաեւ լայնամասշտաբ թեմաների լուսանկարումը: Առավել տարածված են դիցաբանական, մարտի եւ որսի, հողի սրբազան բեղմնավորման, վարուցանքի, կենցաղային թեմաների, ծիսական արարողությունների, թատերականացված արարողակարգերի, ռիթմիկ հանդիսավոր երթերի, ինչդեռ նաեւ դարերի, կախարհանքի, հրաշադասումների ու առաստեղների կերտավորումը: Ուշագրավ են շների օգնությամբ որսի տեսարանները, որտեղ որսորդները զինված են նետ ու աղեղով, միզակներով, տեգերով: Որսի հիմնական կենդանիներն են եղել քարայծր, արխարը կամ վայրի ոչխարը, այծյամը, եղջերուն, եղնիկը եւ այլն:

Դիցաբանական առավել տարածված թեմաներից է կայծակնացայտ աստծո լուսանկարումը: Աստվածությունները լուսանկարված են հսկայական մասներով, որոնցից կարծես ցայտում են կայծակներ: Արդեն նշել ենք, որ կայծակի հիմնական խորհրդանշանը այժն էր: Ըստ ուշագրավ են Ուխտասարի ժայռադասակերներից երկուսը: Դրանցից մեկում կայծակնացայտ աստծո ձախ ձեռքից վեր լուսանկարված է կայծակ, իսկ մյուս լուսանկարում՝ աստվածության աջ ձեռքի վերեւում քանդակված է այծ (նկ. 8): Մեր կարծիքով՝ երկու դեղքում էլ լուսանկարել են շանթարձակ աստծուն՝ մի դեղքում ուղղակիորեն, մյուս դեղքում՝ այլաբանորեն՝ կայծակի փոխարեն լուսանկարելով այծ:

Կանացի կուռքեր: Նայաստանի ժայռադասակերային կոմպոզիցիաներում հստակ գատորոշվում են կնոջ կերտարանքով կուռքերի լուսանկարներ, որոնք ուճավորված ուրվագծային հորինվածքներ են: Դրանցից մեկը Վարդենիսի լեռներում է: Սա մի ընդհանրացված ֆիգուր է՝ կազմված իրանի ուղղանկյունաձեւ եւ գլխի քառակուսի, իրար վրա դրված երկրաչափական լուսանկարներից, որոնք զուրկ են այլ մանրամասներից: Այս լուսանկարի մարդակերտությունը դայմանավորում են իրանը խորհրդանշող ուղղանկյան վերին մասի թեք գծերը եւ վերին քառակուսու ստորին գծի ներձկվածությունը, որոնք խորհրդանշում են մարդու ուսերը եւ դարանոցը: Այս կերտարի մոտ լուսանկարված է վիշապօձ:

Նույն՝ Վարդենիսի լեռներում, մեկ այլ համանման մարդակերտ լուսանկար գլխին կրում է հավերժության դարույրաձեւ նշան: Նրա դիմաց քանդակված են բեզոարյան այծ (ընտանի այծի նախնին), մի առաստեղական (երկնային) չորքոտանի՝ ազդրի վրա լուսանկարված մահիկ, եւ մի խոշոր կատվազգի գիշատիչ: Կանա-

ցի կուռքերի մի ուշագրավ խմբաքանդակ հայտնաբերվել է Արագած լեռան ժայռադատակերներում: Դրանք կնոջ կերդարանքով չորս կուռքերի դատակերներ են, որոնք իրենց ձեռով համանման են Վարդենիսի լեռների ժայռադատակերներին, սակայն իրենց կոմդոզիցիայով ավելի հագեցված են եւ արտահայտիչ: Արագածի կանացի ժայռադատակերներից երկուսն ունեն դորտանշաններ, մեկը՝ գոտի, չորրորդը՝ իգության եռանկյունաձեւ շեշտված նշանը: Նենց սա էլ հիմնավորում է այն տեսակետը, որ այս ժայռադատակերները խորհրդանշում են կանացի կերդարներ: Արագածի ժայռադատակերներում կանանց ֆիգուրներին ուղեկցում են չորս այծ եւ մեկ առյուծակերոյ էակ: Շշտված ժայռադատակերների հետ հանդիպող T-աձեւ նշանը նախամաշտոցյան նշանագրերում մարմնավորում է «Գավազան» համաստեղությունը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու դատակերված էակների երկնային, աստվածային բնույթի մասին:

Այժմ փորձենք վերծանել այս հորինվածքները, առաջնորդվելով այն համոզմունքով, որ Նին Արեւելքի բազմաթիվ ժողովուրդների առաստելներում կան դիցաբանական ընդհանրություններ, ավելին՝ նույնատիպ թափառող դատումներ: Նիմք ընդունելով դատմահամեմատական մեթոդաբանության այս ելակետային սկզբունքը՝ մենք հնարավորություն ենք ստանում Միջագետքի հնագույն գրավոր աղբյուրներում վկայված թեմաները համադրել Նայկական լեռնաշխարհի վաղնշական դատակերագրության հետ եւ կյանքի կոչել մոռացված առաստելները:

Մի շարք հնագույն ժողովուրդների դատակերացումներում այծը՝ որդեա բացառիկ սեքսուալ կենդանի, խորհրդանշել է դտողաբերության արական սկիզբը եւ հաճախ դատակերվել կանանց ֆիգուրների հետ⁶: Երկնային լուսատուների, դարույրների, այծերի, առյուծների եւ վիշապների ամկայությունը կանանց ֆիգուրների հետ՝ մատնանշում է վերջիններիս աստվածային բնույթը, իրադարձությունների՝ երկնքում ծավալված լինելու գաղափարը: Ուշագրավ է, որ Նայաստանի բրոնզի դարի մի շարք հուշարձաններում, մասնավորապես՝ Վերին Նավերի եւ Ներքին Նավերի միջին բրոնզի դարի վաղ փուլի (Վերին Նավեր՝ N 34, Ներքին Նավեր՝ N1 եւ N3 դամբարաններ) արքայական դամբարանների ուրվագծերը հիշեցնում են ժայռադատակերներում եւ վաղ բրոնզի դարի քանդակներում ամրագրված կանացի մարմիններ դատակերելու ոճը: Այսպիսի հատակագիծ ունեցող դամբարաններում, ի թիվս այլ գոհաբերված կենդանիների, հայտնաբերվել են նաեւ առյուծների ու խոշոր կատվագզի գազանների ոսկորներ: Այսինքն՝ ժայռադատակերներում ներկայացված Կին եւ Առյուծ համադրությունը ամկա է նաեւ դամբարանների ծիսակարգում՝ կնոջ մարմնի ուրվագիծ ունեցող գերեզմանափոսեր եւ առյուծների գոհաբերություններ:

⁶ Նույն տեղում:

Ուշագրավ է, որ նշված ժայռադատներին իրենց ոճական առանձնահատկություններով համանման են Նայաստանի վաղ բրոնզի դարի՝ Բ. ա. IV-III հազարամյակների սրբատեղիներում հայտնաբերված թրծակավե կուռքերին: Այսպես, Պուլուրի կուռքերը կավե կանացի արձանիկներ են՝ զոհասեղանի շուրջը նստած դիրքով: Սրանք եւս ունեն քառակուսի գլուխներ, իսկ մի դեղքում՝ թեք ուսեր, այսինքն՝ նման են Վարդենիսի ժայռադատներին եւ, Սրագածի ժայռադատների նման, ներկայացված են խմբով: Որոշ գիտնականների կարծիքով՝ այստեղ դատկերել են դադարաբերության Մայր աստվածուհուն՝ շրջադառված երկրորդական աստվածություններով:

Շենգավիթի 60-70 սմ բարձրությամբ տուֆե կուռքերն ունեն փոսիկաձեւ գայլիկոնված աչքեր (նկ. 9, 10): Պեղումներից հայտնաբերված կուռքերը դրված էին հատուկ ձեւավորված հարթակների վրա, որոնց առջեւում զետեղված էին բարձրադիր կրակարան-զոհասեղաններ⁷: Շենգավիթ եւ Պուլուր հնավայրերից հայտնաբերված կուռքերի քանդակները, ինչդեռ նաեւ դաշտամունքային անոթների անտրոդոմորֆ եւ գոմորֆ ռելիեֆային զարդամոտիվները ոճաձեւաբանական առումով համանման են ժայռադատների զարդանշաններին, ինչը վկայում է սրանց համաժամանակյա լինելու եւ ժայռադատների նշված խմբի Բ.ա. IV-III հազարամյակներին դատկանելը: 2012 թ. Շենգավիթ քաղաքատեղիում դեղեցինք տաճարական մի համալիր, որն անվանեցինք «Նրո տաճար»⁸: Այստեղ, ինչդեռ Նայաստանի բրոնզի դարի մի շարք դաշտամունքային կառույցներում (Դվին, Մեծամոր, Գեղարոտ), փաստվել են զոհարաններ, որտեղ ծիսական արարողությունների ժամանակ զոհասեղանին վառվել է սրբազան հուրը՝ իբրեւ արեւի՝ երկնային հրի կրկնակ, թխվել սրբազան հաց՝ նշխար, իսկ տեղում զոհաբերված կենդանիների արյունն ու հեղված գինին հոսել են սրբարանների վրա քանդակված ամվակաձեւ փոսիկներով (Շամիրամ, Շիրակավան):

Նին Արեւելքի դիցաբանական դատկերացումներում տարածված են նախագո եւ նախաստեղծ տիեզերական տարրեր, որոնցից սկիզբ են առնում երկիրն ու երկինքը, երկնային լուսատուները, աստվածություններն ու մարդիկ:

Դրանցից է Մեծ Մայր Եամմուն:

Եամմու աստվածուհու դաշտամունքը տարածված է եղել Նին Արեւելքի բազմաթիվ ժողովուրդների դիցաբանում՝ Պարսից ծոցից մինչեւ Եփրատ եւ Տիգրիս գետերի ակունքները: Ըստ շումերական արարչագործական առաստելի՝ ի սկզբանե տիեզերքը լցված էր երկնային օվկիանոսի ջրերով, որոնք ոչ սկիզբ ու-

⁷ Դակոբ Սիմոնյան, Շենգավիթ: Շարքային բնակավայր, թե՞ վաղ քաղաք, "Գուշարձան" տարեգիրք, հատոր Ը, Երեւան, 2013, էջ 5-53:

⁸ Դակոբ Սիմոնյան, Շենգավիթի "Նրո տաճարը", Միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Գրիգորի Օրբելու ծննդյան 125-ամյակին: Չեկոցումների դրոյթներ, Եր., 2012, 103-106:

նեին եւ ոչ վերջ: Այս օվկիանոսում աղորում էր նախամայր Նամնուն՝ ամեն ինչի սկիզբը: Նա կույս էր, սակայն ժամանակի ընթացքում ինքն իրեն հղիացավ եւ ծնեց երկվորյակներ՝ Անին (երկինք, արական սկիզբ) եւ Կիին (երկիր, իգական սկիզբ) (ուշագրավ է Կի - կին եւ երկին-երկիր հակադրամիասնությունը հայոց մեջ՝ Վահագնի ծնունդը նկարագրող դիցաբանական հիմնում եւ շումերական առաստեղծում):

Ամենայն հավանականությամբ, կին՝ «գէն, գին» բառից է ծագում նաեւ հունական հողի՝ Գեա աստվածուհու անունը, ինչպէս նաեւ հողի՝ կանացի սկիզբ հանդիսանալու գաղափարը: Երկվորյակների՝ երկիր եւ երկին գաղափարը մարմնավորված է նաեւ հայոց հնագույն առաստեղներում, մասնավորապէս, զարմանալիորեն ռիթմիկ «Երկներ երկին, երկներ երկիր» գողթան երգի մեջ:

Այս եղբայր ու քույր աստվածությունները սկզբնապէս միասնական էին (սիամական երկվորյակներ), սակայն բաժանվեցին իրարից, առաջ ամուսնացան եւ ծնեցին Էնիլ եւ Էնկի եղբայրներին: Վերջինս կոչվել է նաեւ Նայա: Նա իմաստության եւ գետերի աստվածն էր, ստեղծեց բույսերն ու ծառերը, կենդանիներին ու մարդկանց, անասնադասիության աստվածներին եւ շենացրեց աշխարհը ամենայն բարիքներով⁹:

Խուրիական առաստեղծում Նամնու նախամայրը հանդես է գալիս որդես «Մեծ ծով» (հմմտ. հայերեն Ծովինար) գերագույն աստվածություն: Նա կույս է, շունի արական զուգակից, սակայն հղիանալով՝ ծնում է ամորոտամարտիկ Թեշուբին եւ դտղաբերության մեծ աստվածուհուն՝ Իշտարին (հմմտ. Ծովինարի՝ երկվորյակ եղբայրներ ծնելու առաստեղծ): Մեկ այլ առաստեղի համաձայն՝ Թեշուբը ծնվում է հոր բերանից եւ ժամ առ ժամ գորանում (հմմտ. Սասունցի Դավթի ժամ առ ժամ գորանալը): Նա օրհասական կռիվ է մղում ծովավիշաղի դեմ՝ երկնային աշխարհում բանտված իր քրոջը (կնոջը) ազատելու համար (հմմտ. Սանասարի կռիվը վիշաղի դեմ «Պղնձե քաղաքում» փակված իր քրոջը (կնոջը) ազատելու համար): Ըստ առաստեղի՝ այդ օրհասական դայքարում երբեմն հաղթում է Թեշուբը, երբեմն՝ վիշաղօձը: Երբ Թեշուբը դարտվում եւ հեռանում էր մարդկանցից ու աշխարհից, գետերը ցամաքում էին, սկսվում էր երաշտը, մարդիկ զրկվում էին գինուց, գարեջրից ու հացից՝ մշակույթներ, որոնք Նայկական լեռնաշխարհում վկայված են հնագույն ժամանակներից, առնվազն վաղ բրոնզի դարից: Նիշենք Սասնա ծերի «Նացն ու գինին, տեր կենդանին»: Երբ Թեշուբը հաղթում էր, երկրի վրա լիություն ու առատություն էր լինում¹⁰:

Նարություն Մարտիրոսյանը գրում է. «Կասկածից դուրս է, որ շումերական

⁹ Мифы народов мира. Энциклопедия, том 2, Советская энциклопедия, Москва, 1988, с. 662.

¹⁰ Չարություն Մարտիրոսյան, 1978, էջ 30-33:

կրոնական դատկերացումները լայն տարածում ունեին Ղայաստանում»¹¹: Մի-անգամայն ճիշտ է Ղարավային Միջագետքի եւ Ղայկական լեռնաշխարհի միջեւ եղած հնագույն փոխառնչությունների մասին այս դիտարկումը, սակայն դեռեւս դարգաբանված չէ, թե ե՞րբ եւ որտե՞ղ են ծագել այս թափառող առաստեղները: Ղայտնի է, որ շումերները Ղարավային Միջագետքում հաստատվել են Ք.ա. IV-III հազարամյակներում եւ ստեղծել բացառիկ հարուստ մշակույթ, առաջին լեռնական կազմավորումները, հնագույն գրերը, գրառել մեզ հասած վաղեմի դիցաբանական դատումները: Կարելի է եզրակացնել, որ Նամմու նախամոր առաստեղը գրառվել է Ք.ա. III հազարամյակում: Ղայկական ժայռադատկերների թվագրումը դեռեւս մնում է բաց: Ղետեաբար այսօր հստակ չի կարելի եզրակացնել՝ Ղայաստանի ժայռադատկերներում արտացոլված թեմա՞ն է ավելի վաղ, թե՞ շումերական գրառված դատումը: Արդյոք հայկական դիցաբա՞նն է իր ազդեցությունը թողել Շումերի վրա, թե՞ հակառակը:

Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ նախաքաղաքակրթական ժամանակաշրջանում Մայր աստվածուհուն վերագրվում էր նաեւ գերագույն աստվածուհւյան ֆունկցիան: Փորձենք վերակազմել հնագույն առաստեղը, որի վերարտադրման համար քանդակել էին ժայռադատկերները: Ուշագրավ է, որ Շենգավիթի եւ Պուլուրի կնոջ կերդարանքով կուռքերն իրենց ձեռով նման են շումերական Էրիդու քաղաքի տաճարներից մեկում հայտնաբերված նախամայր Նամմու աստվածուհու քարակերտ արձանիկներին: Սրանցից մեկն ունի խոշոր եւ ընդգծված աչքեր, իսկ փորի վրա դատկերված է երկու մարդու փորագիծ ֆիգուր: Էրիդուի մյուս արձանիկի փորի վրա երկվորյակների փոխարեն դատկերված է գույգ այծ: Այծադատկերների առկայությունը շումերական եւ հայկական կուռքերի դատկերաբանականներում վկայում է ոչ միայն դրանց ոճական, այլեւ բովանդակային ընդհանրության մասին: Ն. Մարտիրոսյանը գրում է. «Այս կենդանադատկերը, ըստ երեւույթին, արտահայտում է Մայր աստվածուհու հիմնական ֆունկցիաներից մեկը, նրա կառը շանթ-որոտի եւ երկնային տարերքի հետ: Իրենք՝ այծերն էլ խիստ դադարեւ էակներ են եւ իրենց բուն իսկ էութամբ հնուց անտի կառվում էին երկրագործական դադարեւման դատկերացումներին, մարմնավորում ամորոտ-կայծակի, երկնային ջրերի երեւույթը»¹²:

Ըստ Մարտիրոսյանի՝ Թեշուր աստվածն իր բոլոր ֆունկցիաներով որդեգրվեց եւ դարձավ ուրարտական դանթեռնի գերագույն աստվածներից մեկը՝ «...ծայր տվեց Վահագն-Սանասարի հայկական աստվածների սերնդին»¹³: Մեր

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

կարծիքով՝ Շումերը եւ խորհրդական աշխարհը էթնոմշակութային առումով սերտորեն կապված էին Ղայկական լեռնաշխարհին՝ սկսած նեոլիթյան ժամանակաշրջանից: Այս փոխադարձ կապը շարունակվել է փաստագրվել է նաեւ Վանի թագավորության ժամանակաշրջանում: Թերեւս, կարող ենք եզրակացնել, որ Նամու=Օովինար առատելը Ղայկական լեռնաշխարհում տարածված է եղել դեռեւս Ք.ա. IV հազարամյակում եւ դարեր շարունակ լատմվել ու փոխանցվել է սերնդեսերունդ:

Կենաց ծառ: Ղին աշխարհում այն համընդհանուր լատամունքի առարկա էր: Նա երկրի առանցքն էր, կյանքի խորհրդանշանը: Ղայտնի են սովորական ծառանման լատկերներ, ինչո՞ւն նաեւ ոճավորված, երկրաչափական լատկերազրոյաճը կենաց ծառի կերտվածքներ: Առավել տղավորիչ է Սաոցե լեռան նորահայտ կենաց ծառի լատկերը (նկ. 11), որն իր գուգահեռներն ունի նաեւ Ղայաստանի բրոնզի դարի խեցեղենի գարդարվեստում:

Չառի կուռքը: Ժայռաղատկերների միջակայքում երբեմն դրված են եղել կուռքերի իրական քանդակներ: Առանձնաղես տղավորիչ է Կոտայքի մարզի Չառ գյուղի մերձակա արտաղայրերում հայտնաբերված բազալտից քարե կուռքը՝ սարսափազոու կյոր աչքերով (նկ. 12): Ղնագոյն կուռքերից է նաեւ Ներքին Նավերի N 5Գ դամբարանում հայտնաբերված տու՛՛՛՛՛՛ մարդահասակ կուռքը, որի կրծքի վրա 11 փոսիկներով քանդակված է արեւի սկաղառակը:

Ժայռաղատկերներն իրենց բոլոր էական հատկանիշներով ներկայանում են որղես նախնաղարյան արվեստի հուշարձաններ: Դրանք արտաոցոլում են մարդկանց օգտաղաշտական-գեղագիտական գգացմունքները, աշխարհընկալումները, դիցաբանական ու կրոնական լատկերաոցումները, լատամունքը: Ղայտնի է, որ նեոլիթյան ժամանակաշրջանի արվեստում սխեմատիզմը գուգորղվում է վերացական գաղափարներից բխող սիմվոլիկ-ղայմանական լատկերների հես: Մի քանի բնորոշ հատկանիշների միջոցով, երբեմն սիմվոլների օգնոյաճը կենդանիների եւ մարդկանց կերղարների սխեմատիկ վերարտաղրումն արտահայտում է իրական ու դիցաբանական գաղափարներ: Օրինակ՝ եղջերավոր անատունների հոտի սովարոյոունն արտահայտվել է ոտքերի կամ եղջոյրների բազմաքանակոյաճը ու անհամամասնորեն մեծ լատկերելու սկզբունքով: Այսինքն՝ կենդանիները լատկերվել են հինգ ոտքով, մի քանի Չարք եղջոյրներով եւ այլն: Առանձին դեղքերում այծերի եղջոյրները, սկաղելով ճակատից, հասնում են մինչեւ կենդանու գավակը (նկ. 13):

Նեոլիթյան ժամանակաշրջանի սխեմատիկ լատկերազրոյան համընդհանուր Ֆոնից առանձնանում են ողրիմիտիվ նատուրալիստական ոճով կատարված Ֆիգուրները, որոնք, ի տարբերոյոուն սխեմատիկ լատկերազրոյան,

ունեն անատոմիական կառուցվածքի եւ մարմնամասերի ճշգրիտ վերարտադրության միտում, լուսակերպների ճիշտ համամասնություն: Մխեմատիկ լուսակերպության մեջ այս սկզբունքները հիմնովին խախտված են: Մարդկանց եւ կենդանիների՝ նախատատմական ստեղծագործողի կարեւորած մարմնի անդամները խիստ շեշտված, հիդրոբոլիկ մեծ չափսեր ունեն, որոնք էլ ավելի են ընդգծում կենդանիների եւ մարդկանց շարժումը կամ հանդիսավոր ստատիկ դիրքը: Տասնյակ ժայռադասակերներում այծերի (նոխազների) ոտքերից կամ եղջյուրներից սկիզբ են առնում ալիքաձեւ գծեր, որոնք խորհրդանշում են այս կենդանիների ամոլորոտային ծագումը:

Իմաստաբանությունը

Նայաստանի լեռներում, բարձրադիր սարահարթերում, լեռնալանջերին, հրաբխավեժ քարացած լավաների լողնձագույն եւ սեւ, կարծես կողրադաս մակերեսներին՝ «արեւայրուքների» վրա, քարափների եւ ժայռերի հարթ մակերեսներին, հրաբխային «ռումբերի» ու առանձին բազալտ քարերի վրա դասակերպված են ամենաբազմազան բնույթի լուսակերպանդակներ, նախատատմական մարդու կենաց դաստնությունն ու հոգեւոր ընկալումները: Դրանք վայրի եւ ընտանի կենդանիների՝ հիմնականում՝ քարայծերի, խոյերի, եղջերուների, եղնիկների, վիթերի, ընտանի եւ վայրի (տուր), ինչո՞ւնս նաեւ սատառավոր (գուրր) ցլերի, գոմեշների, ուղտերի, ձիերի, շների, վարազների լուսակերպներ են: Լայնորեն տարածված են նաեւ գիշատիչների՝ աղվեսներ, գայլեր, արջեր, հովազներ, առյուծներ, սողունների՝ օձեր եւ վիշաղներ, տարբեր տեսակների թռչունների, մերկիրան մարդկանց (նախահայրեր, աստվածություններ, դիցաբանական հերոսներ, ազգ սերող նախնիներ, երկնային որսորդներ) ոճավորված լուսակերպները: Առավել տարածված են այծերի եւ օձերի լուսակերպները, եւ դաստիարակյալ չէ, որ ժողովուրդը ժայռադասակերպներն անվանում է «իծագրեր»:

Բազմազան են թեմատիկ ժայռադասակերպների սյուժեները, որոնք ներկայացնում են ինչո՞ւնս աշխարհիկ՝ որսի, ռազմի, կենցաղային, այնո՞ւնս էլ դիցաբանական՝ կոսմոգոնիկ (տիեզերածին), դաշտամունքային, ծիսահմայական, սրբազան բեղմնավորման, հերոսամարտի եւ այլ թեմաներ: Նախատատմական ստեղծագործողների՝ երբեմն անվարժ եւ տեխնիկադեզ անկատար, սակայն անմիջականությամբ հազեցած ստեղծագործությունները ներկայացնում են կախարդական, հմայքներով ու աստվածություններով, բարի ու չար ոգիներով լի հեքիաթային մի աշխարհ, որտեղ իրականն ու անիրականը սերտորեն շաղկապված են միմյանց: Սրանք վաղնջական արվեստի եւ գեղանկարչության ինքնատիղ վավերագրեր են՝ սփռված ողջ Նայկական լեռնաշխարհում:

Ամենայն հավանականությամբ, հսկայական մատներով մարդիկ խորհրդանշան-

շել են կայծակնացայտ, երկարտունները՝ արագավազ, հսկայական անդամներով ֆիզուրները՝ ղոտղաբերության աստվածությունները: Կայծակ են խորհրդանշել այծերը, որոնք առանձին դեռքերում ղատկերվել են կայծակների եւ կայծակնացայտ աստվածությունների հետ՝ շեշտելով նրանց կաղը կայծակի եւ որոտի հետ:

Ժայռադատկերների ուսումնասիրման դատնությունը

Նայկական լեռնաշխարհի ժայռադատկերներով սկսել են հետաքրքրվել դեռևս XIX դարից: Դրանք հայագետներ ու հնագետներ էին, որոնք քարտագրում էին այս հանելուկային նշանները եւ արտանկարում, նկարագրում եւ մեկնաբանում ղատկերները¹⁴: Նայաստանի ժայռադատկերների գիտական սկզբունքով առաջին հետազոտողներից էր Աշխարհբեկ Քալանթարը, որն ընդօրինակեց իրեն հայտնի ժայռադատկերները եւ ստեղծեց դրանց առաջին շտեմարանը¹⁵: Այնուհետեւ, ժայռադատկերներին անդրադարձել են Սեդրակ Բարխուդարյանը¹⁶, Լուսինյանը¹⁷, Բորիս Պիոտրովսկին¹⁸, Լավրենտի Բարսեղյանը¹⁹, Նարություն Մարտիրոսյանը եւ Նամիկ Իսրայելյանը (վերջիններս առանձնադեպ մեծ աշխատանք կատարեցին Գեղամա լեռներում, Պայտասարի շրջակայքում եւ առաջինը փորձեցին վերծանել դրանց իմացաբանական լիցքը)²⁰: Ժայռադատկերների հավաքագրման եւ նկարագրական լեզվի մշակման գործում իր ներդրումն ունի Սանդրո Սարդարյանը²¹: Ժայռադատկերների սեմանտիկայի, կոսմոգոնիկ, դիցաբանական թեմաների իմացաբանական վերծանման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել նաեւ Վարուժան Վասիլյանը²²: Ժայռադատկերների մի հսկա խմբաբանակ արտանկարել է ճարտա-

¹⁴ Տեր-Մովսիսյան Ս., «Արարտի եւ Արագածի գագաթներին» *Արարատ*, 1913, #1, էջ 62-66; Ղափանցյան Գ.Ա., «Յնության մի քանի հիշատակարաններ», *Արարատ*, 1914, #1, էջ 93-95:

¹⁵ Քալանթար Ա., *Արագածը ղատնության մեջ*, Եր., 1935:

¹⁶ Բարխուդարյան Ս., *Խորհրդային Յայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները*, Եր., 1935, էջ 43:

¹⁷ Սանուելյան Խ., *Յին Յայաստանի կուլտուրան*, հ. 1, Եր., 1931, էջ 190:

¹⁸ Пиотровский Б.Б., *Археология Закавказья*, Ленинград, 1949.

¹⁹ Բարսեղյան Լ.Ա., «Նոր նյութեր Յայաստանի հնագույն շրջանի արվեստի ղատնության վերաբերյալ», *Պատմա-բանասիրական հանդես*, 1966, #3, էջ 147-160:

²⁰ Մարտիրոսյան Յ. Ա., «Յայաստանի նախնադարյան մշակույթի մոր հուշարձաններ», *Պատմա-բանասիրական հանդես*, 1969, N 3, էջ 191-208; Մարտիրոսյան Յ. Ա., Իսրայելյան Յ. Ռ., *Գեղամա լեռների ժայռադատկերները*, Եր., Յայկական ՍՍՐ ԳԱ հրատ. 1971:

²¹ Սարդարյան Ս., *Նախնադարյան հասարակությունը Յայաստանում*, Եր., «Միտք» հրատ., 1967, էջ 113-122: Նույնը, *Յայաստանը քաղաքակրթության օրրան*, Եր., ԵՊՀ հրատ., 2004: Սարդարյան Ս., *Ժայռադատկերներ*, Եր., ԵՊՀ հրատ., 2010:

²² Վասիլյան Վ., Առատելներից մինչեւ Բյուրական: Եր., «Սովետական գրող», 1985, էջ 41-49:

րադետ Սուրեն Պետրոսյանը, որը տարիներ շարունակ շրջել է Սյունիքի եւ Գեղամա լեռներում, համբերատար ու ճշտորեն արտանկարել ու վերակազմել հազարավոր ժայռադատկերներ, որոնք աղբյուրագիտական վստահելի սկզբնաղբյուր են: Գրիգոր Կարախանյանը եւ Պավել Սաֆյանը հրատարակել են Սյունիքի ժայռադատկերներին նվիրված մի սովորածավալ հատոր, որն առ այսօր սեղանի գիրք է ժայռադատկերներով զբաղվողների համար²³: Ժայռադատկերների դասակարգումը եւ նոր հայտնագործություններ կատարողների թվում են Կարեն Թոխատյանը, Գրիգոր Արեշյանը, Սամվել Շահինյանը, Նակոբ Սիմոնյանը եւ ուրիշներ:

Երկրաբան Ա. Ժ. Դեմյոխինը բազմաթիվ ժայռադատկերներ է հայտնաբերել Գեղամա լեռներում, իսկ 1966 թ.՝ Մարտունու ենթաշրջանում: 1966 թ. հազարավոր ժայռադատկերներ հայտնաբերվեցին Սյունիքում (Սիսիանի ենթաշրջան) եւ Վայքի (Եղեգնաձորի ենթաշրջան) մարզերում: 2012 թ. ՂՂ մշակույթի նախարարության ղատնամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Նակոբ Սիմոնյան) ժայռադատկերներ հայտնաբերեց Սառցե լեռան լանջերին եւ գագաթին, Ջերմուկի լեռներում եւ կատարեց մի ուշագրավ դիտարկում. ժայռադատկերների համար խիստ կարեւոր է ջրի եւ աղբյուրների առկայությունը: Դա մի կողմից դայմանավորված է քարից բխող ջրի դաշտամունքով, մյուս կողմից՝ ամռան ամիսներին այստեղ բնակվելու համար նդաստավոր դայմաններով, քանգի, մեր կարծիքով, ժայռադատկերներով հագեցած լեռնային լանդշաֆտները հնուց անտի համարվել են դաշտամունքի բացօթյա վայրեր:

Ժայռադատկերների կարեւոր կենտրոնները

Ժայռավետտի կարեւորագույն օջախներ են Սիսիանի ենթաշրջանի Ուխտասար, Քարքարեր եւ Ջերմաջուր հնավայրերը, որոնք գտնվում են ծովի մակերեսից 3000-3300 մ բարձրության վրա: Դրանք հազարամյակներ շարունակ հանդիսացել են դաշտամունքային վայրեր, որտեղ մարդն աղբյուր է ամռան ամիսներին, ստեղծագործել եւ կատարել է ծիսական արարողություններ: Նազարամյակներ շարունակ նույն դաշտամունքային վայրերում, նույն ժայռերի վրա կատարված ժայռադատկերները երբեմն ծածկում են միմյանց՝ ստեղծելով բազմաշերտ հորինվածքներ: Այս բացօթյա թանգարաններում հաշվվում են տասնյակ, գուցե եւ հարյուր հազարավոր տարբեր ժամանակաշրջանների ժայռադատկերներ:

²³ Կարախանյան Գ.Յ., Սաֆյան Պ. Գ., «Սյունիքի ժայռադատկերները» *Հայաստանի հնագիտական հուշարձանները*, 4, *Ժայռադատկերներ*, Երևան, 1970:

Տիրսին սարահարթ: Պատմական Ղայաստանի բացօթյա թանգարաններից մեկը, ժայռադատկերների մի մեծ դասակերասարահ, զետեղված է Վանից 150 կմ հարավ, ծովի մակերեսույթից 2400 մ բարձրության վրա տարածվող Տիրսին սարահարթում, որտեղ վավերագրվել է շուրջ 7000 ժայռադատկեր: Նեոլիթ-խալկոլիթյան ժամանակաշրջանին վերագրվող քարայծերի, եղնիկների, որսի տեսարանների, ծիսական դարերի, երկնային լուսատուների ոճավորված դատկերները փորագծված են ժայռերի վրա եւ մեծ ընդհանրություն ունեն հյուսիսային Ղայաստանի ժայռադատկերների հետ: Սա վկայում է, որ Ղայկական լեռնաշխարհի ողջ տարածքում, հազարամյակներ ի վեր, տարածված է եղել ժայռադատկերային արվեստը, որը տեղական առանձնահատկությունների հետ միասին ունեցել է ընդհանրություններ եւ ձեւավորել միասնական ժայռադատկերային համակարգ:

Եզրակացություն

Ղանդիսանալով արվեստի վաղագույն նմուշներ՝ Ղայաստանի ժայռադատկերները Եւրասիայի վաղագույն ժայռադատկերների ընդհանրության մի մասն են, որոնք կերտվել են Ք. ա. X-I հազարամյակներում: Դրանք սփռված են Խաղաղ օվկիանոսից մինչեւ Ատլանտյան օվկիանոսը ձգվող ընդարձակ գոտում՝ ընդգրկելով Սիբիրը, Միջին Ասիան, Կովկասը, Փոքր Ասիան, Ղյուսիսային Աֆրիկան, Կարելիան, Սկանդինավյան երկրները, Իտալիան, Իտալիան եւ այլն:

Ինքնատիղ եւ միասնական ոճը, բազմաբնույթ թեմաների ու կերտարների ընդգրկումը, գերխիտ կենտրոնացումը վկայում են, որ Ղայկական լեռնաշխարհը ժայռադատկերային արվեստի բնօրրաններից է: Այստեղ իրենց արտացոլումն են գտել ինչդեպ տեղական, այնդեպ էլ հինարեւելյան դիցաբանական թեմաներ:

ARMENIAN ROCK ART

HAKOБ SIMONYAN

PhD in historical sciences

Abstract: During the Mesolithic period (XII-VIII millenniums BC) after the last Vürm/Valdai glaciations almost in all the continents of the world - Eurasia, America, Africa and Australia there started the culture of rock art - abstract or realistic outline portrayal, which was one of the phenomena in the culture created by the prehistoric man. The Upper Paleolithic monumental art of cave drawing was replaced by images smaller about several dozen cm in size. Unlike the monumental art, where the static style prevails, the rock art is distinguished for both static and movable images. One of the essential peculiarities in it is human portrayal, which is almost absent in monumental cave drawings.


The great variety of unique and common themes expressed in the multitude of drawings is evidence that Armenian Highland is one of the homelands of rock art. The characters of both local and Oriental myths have their description in those pictures.

ИСКУССТВО ПЕТРОГЛИФОВ АРМЕНИИ


АКОП СИМОНЯН


Кандидат исторических наук

В эпоху мезолита (XII-VIII тыс. до Р.Х.), после последнего – вьюрмского оледенения, во всех континентах земного шара: Евразия, Америка, Африка, Австралия, возникла культура наскальных рисунков. Петроглифы – абстрактные или реалистические графические изображения, одно из общечеловеческих проявлений первобытного искусства. Взамен монументальных изображений “пещерной живописи” появляются небольшие петроглифы размером от нескольких до десятков см. В отличие от “пещерной живописи”, для которой характерен в основном статический стиль, наскальные рисунки характеризуются как статичностью, так и динамикой. Также новизной является изображение человека, которое почти отсутствует в тематике “пещерной живописи”. Армения глубоко пережила это общечеловеческое проявление древнего искусства. Своеобразная и вместе с тем общая стилистика петроглифов, по всей территории Армянского нагорья, богата и разнообразна по своей тематике, большая сконцентрированность петроглифов, число которых насчитывается до 100 тысяч, свидетельствует, что Армения была одним из важнейших центров наскального искусства. Наряду с местными мифологическими сюжетами, в петроглифах Армении также наличествуют Древневосточные мифологические сцены.




1. Ուխտասար, այժին հետադնդող որսորդ
2. Ուխտասար, երկնային նոխազ եւ երկվորյակներ
3. Մուրադսար, գիսաստղ
4. Պտղնավանք, գիսաստղ






9

- 5. Ուխտասար, ճանկախաչ
- 6. Շենգավիթ. ճանկախաչ դատկերով ափսե
- 7. Կայծակնացայտ աստվածություններ
- 8-9. Շենգավիթ, կուռք





10. Սառցե լեռ, կենաց ծառ
11. Չառ, կուռք
12. Չառ, կուռք

